# Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հաշվետվություն ՎԵՌՆ Արմենիա

# 2017

Beeline®

**Beeline-ը** Հայաստանի խոշորագույն ինտեգրված հեռահաղորդակցության ընկերությունն է: Հիմնադրվել է 1995 թ. մարտ ամսին ամերիկյան Trans-World Telecom ընկերության հետ համատեղ: 2006 թ. նոյեմբերի 3-ից աշխարհի խոշորագույն ինտեգրված օպերատորներից մեկի՝ VEON (նախկինում «ՎիմպելԿոմ Լթդ.») Ընկերությունների խմբի մի մասն է:

## Տվյալներ Ընկերության ծառայությունների մասին

- **GSM, 3G և 4G (LTE) ստանդարտի շարժական կապ Հայաստանի ողջ տարածքում, ամրակցված հեռախոսակապի ծառայություններ**
- **Ինտերնետի հասանելիություն CDMA, ADSL և FTTB տեխնոլոգիաներով**
- **ՀՀ-ում 3G՝ երրորդ սերնդի բջջային ցանցը շահագործած առաջին բջջային օպերատոր**
- **1 Գբիթ/վրկ թողունակությամբ ենթակառուցվածք**
- **100% թվայնացված հեռախոսակապ Երևանում**
- **90 %-ին մոտ թվայնացման ցուցանիշ ՀՀ-ի ողջ տարածքում**
- **Ավելի քան 9000 կմ երկարությամբ լարային ենթակառուցվածք**

# Beeline-ի ձեռքբերումները 2017 թ-ին

- Սակագների նշանակալի նվազեցում
- IPTV ինտերնետային հեռուստատեսություն. IPTV ծառայությունը հասանելի է Հայաստանի Beeline ֆիքսված կապի բաժանորդների գրեթե 80 տոկոսին
- Ավելի քան 900 000 բջջային կապի բաժանորդ
- Կոնվերգենտ ծառայությունների գործարկում. հեռահաղորդակցման ծառայությունների ամբողջական փաթեթ ամբողջ ընտանիքի համար
- Ամրակցված հեռախոսակապի արդիականացում երեք քաղաքներում, ինչի շնորհիվ ինտերնետի արագությունը հասնում է 100 Մբիթ/վրկ
- 3G և 4G բջջային ցանցերի լայնաձավալ արդիականացում
- 16,9 մլն ԱՄՆ դոլարի ներդրում
- 8,7 մլն դրամը գերազանցող հարկային վճարումներ 2017 թ-ին
- Հանդիսանում է Հայաստանի խոշոր հարկատուներից և գործատուներից մեկը
- Beeline-ն այսօր Հայաստանում ունի ամենախոշոր վաճառքի և սպասարկման գրասենյակների ցանցերից մեկը: Beeline-ը հատկապես կարևորում է սպասարկման որակի բարելավումը, ինչի շնորհիվ հաճախորդները կարող են միանալ Beeline-ին և օգտվել պարզ ու հարմար ծառայություններից ավելի հարմարավետ պայմաններում
- Beeline-ի թիմը միշտ սատարում է այն նոր գաղափարների և նախաձեռնությունների իրականացմանը, որոնք օգնում են մարդկանց կյանքը դարձնել ավելի լավը
- Beeline-ը հպարտանում է սեփական կորպորատիվ համալսարանով, աշխատակիցների կարիերայի աճի ու զարգացման հնարավորություններով

Լինելով Հայաստանի խոշորագույն հեռահաղորդակցության ինտեգրված օպերատոր և սոցիալապես պատասխանատու ընկերություն և կազմելով ՎԵՈՆ ընկերությունների խմբի մաս՝ «ՎԵՈՆ Արմենիա»-ն (հանդես է գալիս Beeline բրենդի ներքո) մշտապես աջակցում է երկրում առկա տարբեր խնդիրների լուծմանը և իր ներդրումն է ունենում հասարակության բարեկեցիկ ապագայի կերտման գործում:

Ընկերության համար կորպորատիվ պատասխանատվությունը չի սահմանափակվում կորպորատիվ բարեգործությամբ և ունի երկու հիմնական նպատակ՝ լինել վստահելի ծառայությունների մատուցող և սատարել հասարակության զարգացմանը:

2017 թ-ից ՎԵՈՆ խմբի բոլոր ընկերությունները որդեգրել են կորպորատիվ պատասխանատվության ընդհանուր մոտեցում՝ երկու հիմնական ուղղություններով՝ Digital Skills & Literacy (DS&L)/Թվային հմտություններ և գրագիտություն և ստարտափների աջակցություն՝ Make your mark/ Թո՛ղ քո հետքը գլոբալ սոցիալական ռազմավարություն:

## Թո՛ղ քո հետքը

Ռազմավարության նպատակն է օգնել երիտասարդներին կառուցել իրենց ապագան: Դա արվում է բիզնես միջավայրերի բարելավման և երիտասարդ ձեռներեցներին համապատասխան գիտելիքների տրամադրման շնորհիվ: Այս ամենը նպաստում է տեխնոլոգիական ստարտափների ստեղծմանը և թույլ է տալիս երիտասարդ գործարարներին նորարար ծառայություններ և գործիքներ առաջարկել սեփական հասարակություններին:

## Թվային հմտություններ և գրագիտություն

Այս ուղղության նպատակն է զարգացնել երեխաների թվային հմտություններն ու գրագիտությունը տեխնոլոգիական ուղղվածության կրթական նախաձեռնությունների օգնությամբ:

## Կայուն գործունեություն

Այս ռազմավարության նպատակն է վստահելի և ճկուն գործունեության ապահովումը: Հայտնաբերելով և արձագանքելով հիմնական գործառութային և կառավարման խնդիրներին, այդ թվում կոռուպցիայի, հաճախորդների տվյալների գաղտնիության, գնումների էթիկայի, առողջապահության և անվտանգության հետ կապված՝ ընկերությունը ձգտում է համապատասխանեցնել իր գործունեությունը լավագույն միջազգային ստանդարտներին:

«ՎԵՈՆ Արմենիա»-յի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության նպատակն է երկրում մարդկանց կյանքը դարձնել ավելի լավը՝ նրանց ընձեռելով սեփական բարեկեցիկ ապագան ինքնուրույն կերտելու հնարավորություններ:

# ԿՍՊ հաշվետվության մասին

Հաշվետվությունն ընթերցողին ծանոթացնում է Beeline–ի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ռազմավարությանը, առանցքային ուղղություններին և 2017 թ–ին իրականացված նախագծերին՝ ներկայացնելով դրանց արդյունավետությունն առկա խնդիրների լուծման գործում:

Հաշվետվության նպատակն է ապահովել թափանցիկություն Ընկերության բիզնես գործընթացների, հասարակական գործողությունների և շահագրգիռ կողմերի հետ հաղորդակցության սկզբունքների վերաբերյալ:

2017 թ. Beeline-ի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հիմնական ուղղություններն են՝

1. **Make your mark/ Թող քո հետքը**
2. **Կրթական ծրագրեր դպրոցականների համար**
3. **Մշակութային նախաձեռնություններ**
4. **Նորարարության և բարձր տեխնոլոգիաների զարգացմանն ուղղված ծրագրեր**
5. **Երիտասարդության և կարիերայի խթանմանն ուղղված ծրագրեր**
6. **Համայնքների զարգացմանն ուղղված ծրագրեր**

# «ՎԵՈՆ» խմբի ղեկավարության Գլոբալ համաժողով

2017 թ. նոյեմբերին Երևան ժամանեցին «ՎԵՈՆ» խմբի ավելի քան 180 գլոբալ և տարածաշրջանային ղեկավարներ՝ կորպորատիվ գլոբալ համաժողովին մասնակցելու: Հանդիպման նպատակն էր գնահատել կատարված աշխատանքի արդյունքները, քննարկել և հաստատել խմբի զարգացման ընդհանուր ռազմավարությունը, մասնավորապես, քննարկվել է գլոբալ և տարածաշրջանային թվային պրոդուկտների ներդրումը խմբի անդամ ընկերություններում:

Հայաստանը պատահական չէր ընտրվել՝ որպես այս հանդիպման անցկացման վայր. «ՎԵՈՆ Արմենիան» խմբի արագ զարգացող ընկերություններից է և արդեն մեծ փորձ ունի թվային պրոդուկտների և ֆիքսված ենթակառուցվածքների ոլորտներում:

«ՎԵՈՆ» ընկերությունների խումբը աշխարհի խոշորագույն ինտեգրված օպերատորներից մեկն է: Այն ընդգրկում է մի շարք կազմակերպություններ, որոնք մատուցում են ինչպես անլար և ամրակցված ձայնային կապի ու տվյալների հաղորդման, այնպես էլ լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայություններ ավելի քան 240 մլն բաժանորդներին՝ Ռուսաստանում, Իտալիայում, Ուկրաինայում, Ղազախստանում, Ուզբեկստանում, Տաջիկստանում, Հայաստանում, Վրաստանում, Ղրղզստանում, Լաոսում, Ալժիրում, Բանգլադեշում և Պակիստանում: «ՎԵՈՆ» խմբի ընկերությունները ծառայություններ են մատուցում Beeline, Киевстар, Wind, Mobilink, Banglalink և Djezzy ապրանքանիշերի ներքո:

*«Հեռահաղորդակցության ոլորտը չափազանց դինամիկ է, և հաճախորդների պահանջներն արագ փոփոխվում են: «ՎԵՈՆ»-ը Հայաստանում ստանձնել է այս փոփոխվող պահանջները բավարարելու պարտավորությունը: Հայաստանում Beeline-ի նպատակն է մեր բաժանորդներին տրամադրել լավագույն տեխնիկական հնարավորությունները, պարզ և հարմար ծառայությունները՝ օգտագործելով բոլոր հնարավոր թվային միջոցները: Մենք մտադիր ենք շարունակ աշխատել ի շահ մեր բաժանորդների և ողջ հասարակության»:*

***Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախին:***

# Նոր սկիզբ

# Նոր սկիզբ

*«Այս տարի մեր մեծագույն ձեռքբերումը դարձավ ընկերության վերանվանումը: Այժմ, լինելով «ՎԵՈՆ» խմբի մի մաս, մենք կրում ենք «ՎԵՈՆ Արմենիա» անունը, ինչը մեզ համար խորհրդանշում է նոր սկիզբ»:*

***Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախին:***

**Գլոբալ Տրանսֆորմացիայի** շրջանակում «ՎԵՈՆ» խմբի 12 երկրների ընկերություններն իրականացնում են ժամանակակից թվային ընկերություններ դառնալուն ուղղված համատեղ նախագծեր: Դա արվում է Տրանսֆորմացիայի գլոբալ ռազմավարության շրջանակներում:

2017 թ. նոյեմբերին Հայաստանում Beeline-ն ամփոփեց ընկերությունում անցկացվող գլոբալ տրանսֆորմացիայի հերթական փուլի արդյունքները:

# Ի՞նչ է նշանակում Տրանսֆորմացիա

Տրանսֆորմացիան գլոբալ ռազմավարական գործընթաց է, որի նպատակն է ընկերությունը դարձնել նոր սերնդի կազմակերպություն:

1. **Կրճատել գործառնական ծախսերը:**
2. **Աշխատանքում կիրառել ժամանակակից տեխնոլոգիաներ:**
3. **Բարելավել աշխատանքի կազմակերպման գործընթացները** Agile և Lean մեթոդների կիրառմամբ:
4. **Ներդնել գլոբալ կառուցվածքներ,** ինչպիսիք են GSS-երն (գլոբալ գործառնական կենտրոններ) ու HUB-երը (տարածաշրջանային փորձագիտական կենտրոններ): Հայաստանում Beeline-ի կազմում այս տարի սկսել է գործել «ՎԵՈՆ» խմբի Եվրասիա տարածաշրջանի IT Hub-ը, որտեղ ընդհանուր թվային նախագծեր են մշակվում:
5. **Տրանսֆորմացնել կորպորատիվ մշակույթը** նոր Open Space (բաց տարածություն) գրասենյակների շնորհիվ:

# #BeTheChange

#BeTheChange ծրագրի շնորհիվ տրանսֆորմացիոն գործընթացում ներգրավվել են ընկերության բոլոր աշխատակիցները: Ծրագրի նպատակն է գտնել բիզնեսի արդյունավետության բարձրացմանն ուղղված լուծումներ, որոնք կարող են նպաստել ամբողջ ընկերության հետագա առաջընթացին:

Ընկերության տարբեր բաժինների աշխատակիցներից կազմված թիմերը առաջադրեցին տրանսֆորմացիոն նախագծեր, որոնց նպատակն էր գտնել ընկերության գործընթացների պարզեցմանն ուղղված լուծումներ:

*«Ծրագրի շնորհիվ մենք լուծում ենք երկու խնդիր՝ գործնականորեն ներդնում ենք Agile մեթոդով աշխատելու նախադեպ և միևնույն ժամանակ լուծումներ գտնում տարատեսակ խնդիրների համար»:*

***Հայաստանում Beeline-ի տրանսֆորմացիայի ղեկավար Արշակ Մուրադյան***

# Digithon

Դիջիթոն նորարարությունների մրցույթը ստեղծվել է «հեքըթոն» ձևաչափով՝ նոր թվային պրոդուկտներ ստեղծելու նպատակով: Մրցույթը տևում է 24 ժամ, գաղափարների իրականացման գործում թիմերին օգնում են հատուկ մենթորները:

2016 թ-ին BeeForce թիմը հաղթանակ էր բերել Beeline Armenia-ին Ղրղզստանում կայացած միջկորպորատիվ Եվրասիական Digithon-ում: Այդ իսկ պատճառով 2017-ին հենց Հայաստանը պիտի դառնար հաջորդ Եվրասիական Digithon-ը հյուրընկալող երկիրը:

Հունիսին ընկերության տարբեր մասնաճյուղերի աշխատակիցներից կազմված հինգ թիմեր երկրորդ ամենամյա Digithon-ի ընթացքում ստեղծեցին նորարար հավելվածներ և ծառայություններ բիզնեսի և հաճախորդների համար:

Հաղթող Digital Pirates թիմը մեկ ամիս անց Հայաստանը ներկայացրեց Սևանի ափին տեղի ունեցած միջկորպորատիվ Եվրասիական Digithon-ում:

*«Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Beeline-ի աշխատակիցները քաջատեղյակ են շուկայի և տեխնոլոգիաների զարգացմանն ուղղված հաճախորդների պահանջներին ու ցանկություններին, նրանք համատեղ ուժերով կառաջարկեն այնպիսի թվային լուծումներ, որոնք կդարձնեն մեր ծառայություններն է՛լ ավելի նորարար, պարզ և հարմար»:*

***Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախին:***

# Digithon Eurasia 2017

Մեկ շաբաթ տևած «ՎԵՈՆ» Եվրասիա Digithon-ին Սևանի ափին մասնակցեցին «ՎԵՈՆ»-ի աշխատակիցներից կազմված միջազգային և բազմաֆունկցիոնալ թիմերը Հայաստանից, Ղրղզստանից, Վրաստանից, Ղազախստանից, Տաջիկստանից, Ուզբեկիստանից և Ուկրաինայից: Լավագույն նորարարական նախագծերն արդեն իսկ հայտնվել են «ՎԵՈՆ»-ի բարձրաստիճան ղեկավարության ուշադրության կենտրոնում և հետագայում կարող են իրականացվել «ՎԵՈՆ» խմբի կողմից:

Նոյեմբերին Երևանում անցկացվեց «ՎԵՈՆ» ընկերությունների խմբի առաջին գլոբալ Դիջիթոնը, որին մասնակցեց խմբի ընկերությունների 60 աշխատակից՝ 12 երկրներից: Միջոցառմանը առցանց հետևել է 35 000 դիտորդ:

«ՎԵՈՆ» խմբի համար սա փոխհամագործակցության և թիմային ոգին ամրապնդելու (team building-ի) նոր ձևաչափ էր, որտեղ աշխատակիցների ուժերն ուղղված էին հաճախորդների համար արդիական լուծումների ստեղծմանը:

*«Սա այն դեպքն է, երբ կարելի է շնորհավորել բոլոր մասնակիցներին, քանի որ Դիջիթոնը պարզապես մրցույթ չէ. սա հանդիպելու, հետաքրքիր ժամանակ անցկացնելու և նոր բաներ սովորելու լավ առիթ է: Համոզված եմ, որ մրցումների ժամանակ առաջացած գաղափարներից ոչ մեկը չի կորչի»:*

***Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախին***

# Շարունակելով լավագույն ավանդույթները

Այսպիսով «Վեոն Արմենիան» իրագործում է տրանսֆորմացիոն նոր ռազմավարություն՝ նոր նախագծեր, ապագայի նոր տեսլական: Սակայն այս ամենի հիմքում ընկած են Ընկերության մշտական արժեքները, որոնք արտահայտվում են՝ վաղուց Beeline-ի կարգախոսը դարձած սեղմ նախադասությամբ՝ «Օգնել մարդկանց փոխել իրենց կյանքը դեպի լավը»: Կրկին Beeline-ի ուշադրության կենտրոնում են.

1. **SS ոլորտի զարգացումը Հայաստանում -** մասնավորապես Make Your Mark առաջադիմական ռազմավարության շարունակական իրականացումը,
2. **Երիտասարդ մասնագետների և ուսանողների կարիերայի աճը և մրցունակությունը աշխատաշուկայում -** բազմաթիվ դասախոսություններ, ստաժավորման ծրագրեր՝ ինչպես մայրաքաղաքում, այդպես էլ մարզերում,
3. **Երեխաների անվտանգությունն ու բարեկեցությունը -** մասնավորապես «Երեխաների խոսքի ուժը» մրցույթը, «Երեխաների առցանց անվտանգությունը» ծրագիրը և այլ զարգացնող ծրագրեր,
4. **Կրթությունը և մշակույթը -** մասնավորապես Cafesjian արվեստի կենտրոնի հետ երկարամյա և արդյունավետ համագործակցությունը:

# Make Your Mark
# «Թող քո հետքը»

**«ՎԵՈՆ»-ի «Թող քո հետքը» գլոբալ ռազմավարությունն օգնում է մարդկանց իրենց կյանքը փոխել դեպի լավը:** Ռազմավարության շրջանակում Հայաստանում Beeline-ը իրականացրել է բազմաթիվ ծրագրեր, մասնավորապես.

- **Eurasia Mobile Challenge-ը,**
- **Մայքրոսոֆթ Հայաստանի հեքքթոնը,**
- **«Ձեռնարկատիրական մտածելակերպի զարգացում» ծրագիրը:**

make your mark

# Eurasia Mobile Challenge

Make Your Mark առաջադիմական ռազմավարության նախաձեռնություններից մեկն է Eurasia Mobile Challenge-ը: Նորարարական այս մրցույթի շրջանակում SS ոլորտի մասնագետներից բաղկացած թիմերը առաջարկում են ոլորտի զարգացմանն ուղղված թվային գաղափարներ: Հունվարին Երևանում միջազգային ժյուրիի անդամներին իրենց նախագծերը ներկայացրեցին տեղական փուլի 24 հաղթող թիմեր:

Մասնակից թիմերը ժամանել էին ութ երկրից՝ Հայաստան, Վրաստան, Ղազախստան, Ղրղզստան, Ռուսաստան, Տաջիկստան, Ուկրաինա և Ուզբեկստան. յուրաքանչյուր երկրից՝ երեքական թիմ: Տարածաշրջանային փուլում Հայաստանը ներկայացնում էին Earlyone, Terreva և Certifire թիմերը:

Eurasia Mobile Challenge-ի երեք հաղթողներն էին ConfBot թիմը Ռուսաստանից, Earlyone-ը Հայաստանից և Treepex-ը Վրաստանից: Նրանք ստացել են դրամական պարգևներ՝ 20, 15 և 10 հազար ԱՄՆ դոլար, և մեկնել Բարսելոնա՝ մասնակցելու Բջջային կապի համաշխարհային կոնգրեսի՝ Mobile World Challenge-ի շրջանակում կայանալիք եզրափակչին:

*«Մենք տպավորված ենք այն խանդավառությամբ և աշխուժությամբ, որ նկատել ենք մրցող թիմերի շրջանում: Ավելի քան համոզված ենք, որ ժամանակակից, ճկուն մտածելակերպով և թվային նորարարությունների ուղղությամբ կենտրոնացած այս երիտասարդները կարող են դառնալ ոլորտի հաջորդ խոշոր բջջային ֆենոմենը»:*

***Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախին***

# Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոն Հայաստանի հեքըթոն

Հոկտեմբերին տեղի ունեցավ Հայաստանում Beeline-ի և Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոն Հայաստանի կողմից կազմակերպված «Հեռահաղորդակցության Հեքըթոն»՝ նորարար գաղափարների և ծրագրավորման երկրորդ մրցույթը: Մրցույթի նպատակն էր խրախուսել ստեղծագործ երիտասարդներին՝ ժամանակակից տեխնոլոգիաների հնարավորություններն ուսումնասիրելու և օգտագործելու, և ամենակարևորը՝ թվային նորարար լուծումներ առաջարկելու գործում:

Հեքըթոնի հիմնական ուղղություն ընտրվեց Big Data-ի օգտագործումը հեռահաղորդակցության ոլորտում:

Հաղթող ճանաչվեց Lezoo թիմը, որը մշակել էր խմբակային զանգի հնարավորություն և համաժամանակյա թարգմանություն ապահովող՝ տեխնոլոգիական տեսանկյունից բավականին նորարար ու բարդ մի լուծում: Երկրորդ հորիզոնականը կիսեցին Iterate և Megista թիմերը:

*«Հաղթող թիմերի լուծումները մշակված են նորագույն տեխնոլոգիաների հիման վրա: Հետագա զարգացման և ճիշտ շուկայահանման դեպքում դրանք կարող են դառնալ բավականին նորարար և եկամտաբեր պրոդուկտներ, որոնցով հետաքրքրված կլինեն հեռահաղորդակցության տարբեր օպերատորներ»:*

***Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի տնօրեն Արտաշես Վարդանյան:***

*«Մենք խիստ շահագրգռված ենք ոլորտին վերաբերող նորարար լուծումներով: Դրանք օգնում են մեզ մատուցել ժամանակակից, հետաքրքիր և բաժանորդների համար օգտակար ծառայություններ: Իհարկե, դա մեկ օրվա գործ չէ, և այդ ուղղությամբ մեր ընկերությունում մշտական աշխատանք է տարվում»:*

***Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախին:***

# «Ձեռնարկատիրական մտածելակերպի զարգացում» ծրագիր

2017 թ-ին Beeline-ը և Հայաստանի գործատուների հանրապետական միությունն (ՀԳՀՄ) իրականացրեցին «Ձեռնարկատիրական մտածելակերպի զարգացում» ծրագիրը: Make your mark գլոբալ ռազմավարության մաս կազմող ծրագրի նպատակն էր զարգացնել ձեռնարկատիրական գիտելիքների ուսուցումը և ձեռնարկատիրական մտածելակերպի զարգացումը հայ դպրոցականների շրջանում, ձևավորել ձեռնարկատիրության մշակույթ, կրթության և կարերիայի պլանավորում ժամանակակից երկու առաջատար բնագավառներում՝ Տեղեկատվական տեխնոլոգիաներ և ինժեներինգ:

Ծրագրի շրջանակում ավելի քան 300 աշակերտներ ինքնուրույն մշակեցին բիզնես ծրագրեր, իսկ 30 ուսուցիչներ անցան համապատասխան վերապատրաստում՝ «Տեխնոլոգիա» դասի համար: Արդյունքում Երևանի Խորենացու անվան թիվ 143 միջնակարգ դպրոցում ստեղծվեց «Խամաճիկ» ռոբոտը, որի համար մշակվեց նաև կառավարման ծրագիրը: Իսկ Գյումրու Վահան Թեքեյանի անվան թիվ 2 ավագ դպրոցում պատրաստվեց հատուկ սարք, որը հնարավորություն է տալիս օգտագործել արևային էներգիան տարբեր կենցաղային նպատակներով՝ մասնավորապես ջուրը տաքացնելու:

# Միխայիլ Կաշկինի՝ Python ծրագրավորման լեզվին նվիրված վարպետության դասը Երևանում

2017 թ-ի հունիսի 23-ին միջազգային SS փորձագետ Միխայիլ Կաշկինը Beeline-ի գրասենյակում վարպետության դաս անցկացրեց՝ ներկայացնելով աշխարհում ծրագրավորման ամենապահանջված լեզուներից մեկը՝ Python-ը: Python-ը՝ հեշտ ընթեռնելիության ու հզորության շնորհիվ լայնորեն կիրառվում է կայքերի, տվյալների վերլուծության և մեքենայական ուսուցման համար: Միխայիլ Կաշկինն այս լեզվով աշխատում է 16 տարի, համագործակցել է Google-ի և՝ Fortune 500 ցուցակում ընդգրկված ամերիկյան այլ առաջատար ընկերությունների, ինչպես նաև Եվրոպայի, ԱՄՆ-ի, Թաիլանդի, Ռուսաստանի, Հայաստանի և Ուկրաինայի պետական մարմինների հետ:

Բացի Beeline-ի ներկայացուցիչներից վարպետության դասին մասնակցեցին նաև Masys information systems, Ziltech և Fifth ընկերությունների աշխատակիցները:

*«Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտն այսօր աշխարհում առավել ակտիվ զարգացողներից մեկն է: Այդ ոլորտի մասնագետների համար շատ կարևոր է քայլել ժամանակին համընթաց, ետ չմնալ նոր միտումներից ու լուծումներից: Դա կարևոր է ոչ միայն իրենց մասնագիտական առաջընթացի, այլև Հայաստանի ընդհանուր զարգացման համար»:*

***Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախին:***

# Համագործակցություն Գաֆէսճեան արվեստի կենտրոնի հետ

2016-2017 ուսումնական տարվա ընթացքում Beeline-ի և Գաֆէսճեան արվեստի կենտրոնի համագործակցության արդյունքում իրականացվել է հինգ մանկապատանեկան և ընտանեկան կրթական ծրագիր՝ 100-ից ավել բազմաբնույթ դասընթաց: Ընդհանուր առմամբ, ավելի քան 2300 դպրոցականներ և ընտանիքներ մասնակցել են կենտրոնում անցկացրած նախագծերին:

*«Շնորհակալ ենք Beeline-ին՝ Կենտրոնի կրթական ծրագրերի շրջանակներում շարունակական համագործակցության համար»:*

***Գաֆէսճեան արվեստի կենտրոնի տնօրենի պաշտոնակատար Վահագն Մարաբյան:***

# «Հանդիպում գրքի հետ» կրթական ծրագիր

Մարտին ԳԱԿ Ինտերակտիվ ուսումնական կենտրոնում Beeline-ի հովանավորությամբ անցկացվեց «Հանդիպում Գրքի հետ» կրթական ծրագիրը, և տեղի ունեցավ ծրագրին մասնակից երեխաների նկարազարդումներով ու Երևանի Գեղարվեստի պետական ակադեմիայի ուսանողների դիզայնով ստեղծված՝ «Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունների ընտրանի» տպագիր գրքի շնորհանդեսը:

«Հանդիպում գրքի հետ» կրթական ծրագիրն անցկացվեց ԳԱԿ-ի «Գրիգոր Խանջյան. Պատկերից անդին» ցուցադրության շրջանակում և նախատեսված էր բոլոր տարիքի դպրոցականների համար: Ծրագրին մասնակցեցին 2-10-րդ դասարանների ավելի քան 270 սովորողներ 16 դպրոցներից, ովքեր ցուցադրության շրջանակներում ծանոթացան հայ մեծանուն նկարիչ Գրիգոր Խանջյանի գրքարվեստին:

*«Գաֆէսճեան արվեստի կենտրոնի հետ համատեղ իրականացված սոցիալական ծրագրերն ուղղված են երեխաների և նրանց ծնողների կյանքն ավելի լավը դարձնելուն: Բազմաթիվ անգամներ անձամբ ականատես եմ եղել, թե ինչ խանդավառությամբ են երեխաները և նրանց ծնողները ստեղծում իրենց աշխատանքները, ինչը ևս մեկ անգամ վկայում է այն մասին, որ մենք ճիշտ ուղու վրա ենք»:*

***Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախին:***

# «Երաժշտական զբոսանքներ» ծրագիրը

2017 թ-ին Beeline-ի աջակցությամբ Գաֆէսճեան արվեստի կենտրոնում շարունակաբար անցկացվեց «Երաժշտական զբոսանքներ» կրթական ծրագիրը՝ նախատեսված 8-11 տարեկան երեխաներ ունեցող ընտանիքների և 12-16 տարեկան պատանիների համար: Ծրագրի հեղինակը դաշնակահարուհի, երաժշտագետ **Մարինե Կարոյանն է**:

Ինտերակտիվ հանդիպումների ընթացքում մասնակիցներն անդրադարձան երաժշտական ամենատարբեր թեմաների՝ նախապատմական շրջան, հին քաղաքակրթություններ, Հին Հունաստան և Հռոմ, Միջին դարեր և Վերածնունդ: Ծրագրի մեկնարկից ի վեր իրականացվեց ավելի քան 14 հանդիպում, երեխաների, պատանիների և նրանց ընտանիքների հետ:

*«Երաժշտական և էսթետիկ դաստիարակությունն անձի կայացման գործում կարևորագույն նշանակությունն ունի: Եվ մեր սոցիալական պատասխանատվությունն է երիտասարդության բազմակողմանի զարգացման համար պայմաններ ստեղծելը»:*

***Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախին:***

# «Ամառային քանդակների պարտեզ» ծրագիր

Հուլիսից մինչև սեպտեմբեր Գաֆէսճեան արվեստի կենտրոնում անցկացվում էր «Ամառային քանդակների պարտեզ» կրթական ծրագիրը՝ հիմնված Գաֆէսճեան քանդակների պարտեզի ցուցանմուշների վրա և նախատեսված 5 տարեկանից բարձր երեխաներ ունեցող ընտանիքների համար:

Կրթական այս նախագծի շնորհիվ յուրաքանչյուր շաբաթ օրն ընտանիքները մասնակցում էին ինտերակտիվ շրջայցի, բացահայտում Գաֆէսճեան քանդակների պարտեզում ներկայացված արվեստագետների աշխատանքներն ու կենդանակերպ արձանները, ծանոթանում օգտագործված նյութերին և կատարման տեխնիկային, որից հետո Կենտրոնի Ստեղծագործական սրահում՝ Կենտրոնի կողմից տրամադրված նյութերով ստեղծում իրենց կենդանակերպ քանդակները:

Ընդհանուր առմամբ՝ հուլիսից սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում, ծրագրին մասնակցեց 45 ընտանիք:

*«Առաջադեմ կրթությունը ենթադրում է նորարար մեթոդներ: Սեփական ձեռքով քանդակների ստեղծումը ու վարպետների գործերին ծանոթությունը միանշանակ խորը և ամուր գիտելիքներ կտա երեխաներին»:*

***Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախին:***

# Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված ավանդական միջոցառումը

Beeline-ը և Գաֆէսճեան արվեստի կենտրոնը, ավանդույթի համաձայն, երեխաների համար տոնի վերածեցին հունիսի 1-ը:

«Երեխաները միավորում են աշխարհը» տոնական կրթական նախագծում ներգրավվել էր շուրջ 100 աշակերտ՝ Հայաստանի չորս տեղական դպրոցների և QSI Երևանի միջազգային դպրոցի՝ 6-ից 8-րդ դասարաններից: Նպատակն էր՝ կրթական հաստատությունները համախմբել մեկ ընդհանուր հետազոտական ծրագրի մեջ՝ ստեղծելով համագործակցության հարթակ Հայաստանում՝ օտարազգի և հայ դպրոցականների միջև:

Նախորդող մեկ ամսվա ընթացքում երեխաները հետազոտություն էին կատարում քարերի մասին, որից հետո իրենց նախագծերը ներկայացրեցին Գաֆէսճեան արվեստի կենտրոնում:

Հունիսի մեկին մասնակից դպրոցականները և այցելուները գունավոր քարերով վերապատկերեցին Երկիր մոլորակի ուրվագիծը Գաֆէսճեան քանդակների պարտեզում, իսկ երեկոյան ելույթ ունեցան հիփ հոփ և բրեյք դանս երաժշտական ոճերի պարային խմբերը:

# Որպես արդյունավետ համագործակցության արդյունք՝ Beeline-ը երկրորդ անգամ դարձավ Գաֆէսճեան արվեստի կենտրոնի կորպորատիվ անդամը:

Հունիսի 13-ին հանդիսավոր արարողության ժամանակ Գաֆէսճեան արվեստի կենտրոնի Գործադիր տնօրենի պաշտոնակատար Վահագն Մարաբյանը Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախինին հանձնեց «Բարերար» մակարդակի կորպորատիվ անդամակցության վկայագիր՝ 2016-2017 ուսումնական տարվա ընթացքում մանկական ու երիտասարդական կրթական զանազան ծրագրեր հովանավորելու համար: Նաև հատուկ շնորհակալագիր հանձնվեց Beeline-ի Հասարակայնության հետ կապերի ծառայությանը՝ փոխարդյունավետ և երկարաժամկետ համագործակցության համար:

*«Այս կերպ մենք ոչ միայն հայտնում ենք մեր երախտագիտությունն աջակցության համար, այլև մեր պատրաստակամությունը հետագա փոխշահավետ համագործակցությանը»:*

***Գաֆէսճեան արվեստի կենտրոնի գործադիր տնօրենի պաշտոնակատար Վահագն Մարաբյան:***

*«Թույլ տվեք խորին շնորհակալությունս հայտնել իմ և Ընկերության աշխատակիցների անունից կորպորատիվ անդամակցության կարգավիճակին արժանանալու համար: Հայաստանում Beeline-ի և Գաֆէսճեան արվեստի կենտրոնի համատեղ իրականացված սոցիալական ծրագրերն ուղղված են երեխաների և նրանց ծնողների կյանքն ավելի լավը դարձնելուն»:*

***Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախին:***

# Լավագույն նախագծերը երեխաների համար «Երեխաների խոսքի ուժը»

Beeline-ի և Մանկական զարգացման հիմնադրամի «Երեխաների խոսքի ուժը» ծրագրի նպատակն էր զարգացնել երեխաների և պատանիների ստեղծագործ, քննադատական և այլընտրանքային մտածողությունը, բարձրացնել ծնողների և համայնքի բնակիչների իրազեկվածությունը երեխաների բարեկեցության վերաբերյալ:

Ծրագրի մեկնարկը տրվեց Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքում՝ հանրային իրազեկման միջոցառումների շարքով, և շարունակվեց Արարատի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերի Նոր Խարբերդ, Այնթափ, Եղեգնաձոր, Վայք, Իջևան և Դիլիջան համայնքներում: Ավելի քան 220 երեխա, 1500 ծնող ու համայնքի բնակիչ ներգրավվել են ծրագրի շրջանակում անցկացված ստեղծագործական մրցույթում: Հաղթողները վեցն էին՝ Եղեգնաձորից և Վայքից: Բոլորը ստացան պատվոգրեր և նվերներ:

*«Beeline-ի այս ծառայությունը հնարավորություն տալիս է մեզ ծանոթանալու ընտանիքների և առհասարակ երեխաների խնդիրներին հենց հասցեատերերից»:*

***Մանկական զարգացման հիմնադրամի տնօրեն Լուսինե Սիմոնյան:***

*«Beeline-ն իր սոցիալական պատասխանատվության շրջանակում մշտապես իրականացնում է ծրագրեր, որոնք ուղղված են կրթության զարգացմանը և երեխաների աջակցմանը: Beeline-ի համար հատկապես կարևոր է այն ծրագրերի իրագործումը, որոնք թվային տեխնոլոգիական լուծումների միջոցով նպաստում են ապագայի կերտմանը»:*

***Հայաստանում Beeline-ի Հասարակայնության հետ կապերի ղեկավար Նաիրա Նազարյան:***

# «Երեխաների առցանց անվտանգությունը»

Դեկտեմբերին Վորլդ Վիժն Հայաստանը և Հայաստանում Beeline-ն ամփոփեցին «Երեխաների առցանց անվտանգություն» ծրագիրը, որը 12 ամսվա ընթացքում իրականացվեց Կապանում, Թալինում ու Երևանում և ներառեց 7-18 տարեկան 600 պատանի, 90 ծնող ու խնամակալ և 30 ուսուցիչ:

Երեխաների ու երիտասարդների համար կազմակերպվեց 30-ից ավել դասընթաց, որոնց միջոցով մարզերի բնակիչները ծանոթացան օնլայն տիրույթում ճիշտ կողմնորոշվելու և համացանցի բացասական կողմերից խուսափելու միջոցներին, յուրացրեցին օնլայն վարքագծի սկզբունքները:

*«Առցանց անվտանգության խնդիրն իսկապես հրատապ է, քանի որ շատ ծնողներ ու երեխաներ պատշաճ պաշտպանված չեն օնլայն տիրույթում: Այս դասընթացից ստացված գիտելիքները կօգնեն երեխաներին հետագայում խուսափել սպառնացող վտանգներից»:*

***Վորլդ Վիժն Հայաստանի ծրագրի տնօրեն Ժիրայր Էդիլյան:***

*«Լինելով պատասխանատու SS ընկերություն՝ Beeline-ը խիստ շահագրգռված է, որպեսզի իր ծառայությունները լիարժեք օգտագործվեն հօգուտ մեր հաճախորդների: Անվտանգությունը համացանցում շատ կարևոր է, հատկապես դեռահասների շրջանում, և մենք մեր կողմից անում ենք հնարավորը՝ նրանց անհրաժեշտ գիտելիքներով զինելու համար»:*

***Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախին:***

# «Արմաթ»՝ ապագայի ալգորիթմը

Սեպտեմբերին «Արմաթ» տեխնոլոգիական լաբոատորիաներն իրագործող Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (ԻՏՁՄ) գործադիր տնօրեն Կարեն Վարդանյանն ու Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախինն այցելեցին Երևանի թիվ 173 հիմնական դպրոցի ինժեներական լաբորատորիա՝ «Արմաթ»-ի սաներին Beeline-ի՝ ավելի քան 1000 նոր WiFi սարքեր հանձնելու համար: Այդ սարքավորումների և դրանց առանձին մասերի օգնությամբ սովորողները կարող են կառուցել ռոբոտներ և էլեկտրոնիկայի տարբեր խնդիրներ լուծել: Ստացված լավագույն լուծումները սեպտեմ-բերի 29-ից հոկտեմբերի 1-ը ներկայացվեցին Դիջիթեք ամենամյա տեխնոլոգիական ցուցահանդեսում:

*«Ապագա մեծ հաղթանակները սկսվում են փոքր քայլերից: Այսօր մենք աջակցում ենք այս երիտասարդների առաջին քայլերին, որից հետո նրանց առջև երկար ճանապարհ է բացվելու»:*

***Հայաստանում Beeline-ի Հասարակայնության հետ կապերի ծառայության ղեկավար Նաիրա***

# Բրիտանական ֆիլմերի 15-րդ փառատոն

Ապրիլին Բրիտանական խորհուրդը, Երևանում Բրիտանական դեսպանատունը և Հայաստանում Beeline-ն անցկացրեցին Բրիտանական ֆիլմերի 15-րդ հոբելյանական փառատոնը: Այս տարի փառատոնը նվիրված էր մարդու իրավունքներին և ներառականությանը:

Ընդհանուր առմամբ փառատոնին մասնակցեց ավելի քան 25.000 մարդ, ովքեր հնարավորություն ունեցան դիտել մայրաքաղաքում և մարզերում՝ Գյումրի, Դիլիջան, Արմավիր և Մարտունի քաղաքներում ցուցադրված 15 ֆիլմ և ծանոթանալ ժամանակակից Բրիտանիային իր ողջ բազմազանությամբ ու նորարարությամբ:

Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի սաները հաճախեցին վիզուալ էֆեկտների մասնագետ Քերոլայն Պիրեսի աշխատարանին, իսկ Հայ-ռուսական համալսարանի և Երևանի թատրոնի ու կինոյի պետական ինստիտուտի ուսանողների համար դասընթացներ անցկացրեց ֆիլմարտադրության մարքեթինգի մենեջեր Սառա Մոսսեսը:

Տեղի ունեցան նաև մարդու իրավունքներին նվիրված քննարկումներ, որոնց մասնակցեց շուրջ 700 մարդ:

*«Մշակույթը հիանալի միջոց է, որն օգնում է ազգերին ավելի լավ ճանաչել իրար, ինչպես նաև փոխանակել միմյանց համար կարևոր գաղափարներ»:*

***Հայաստանում բրիտանական դեսպան Ջուդիթ Ֆարնուորթ:***

*«Բրիտանական ֆիլմերի ամենամյա փառատոնը հանրապետության մշակութային կյանքի կարևոր բաղադրիչներից է, որն իր շուրջն է համախմբում բրիտանական կինոյի սիրահարներին: Յուրաքանչյուր տարի փառատոնն այցելում է տարբեր մարզեր, ինչը հնարավորություն է տալիս մշակութային կյանքը մայրաքաղաքից տեղափոխել նաև այլ կենտրոններ»:*

***Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Արևիկ Սարիբեկյան:***

*«Աջակցելով Բրիտանական ֆիլմերի փառատոնի անցկացմանը՝ Beeline-ը ոչ միայն նպաստում է լավագույն ֆիլմերի ցուցադրմանը, այլ փորձում է երիտասարդներին ծանոթացնել այլև երկրների մշակույթին և համաշխարհային ճանաչում ունեցող կինոարվեստի գործերին»:*

***Հայաստանում Beeline-ի Հասարակայնության հետ կապերի ծառայության ղեկավար Նաիրա Նազարյան:***

# Հաղթանակի պատմություն: «Նոր տեխնոլոգիաները համայնքի զարգացման գործում»

Հոկտեմբերին մեկնարկեց Մանկական զարգացման հիմնադրամի (ՄԶՀ), Beeline-ի և PicsArt-ի համատեղ՝ «Նոր տեխնոլոգիաները համայնքի զարգացման գործում» երկրորդ ծրագիրը, որին այս տարի աջակցեց նաև «Թի-Էս-Դի» ընկերության հայաստանյան գրասենյակը:

Ծրագրում ընդգրկված էին ՄԶՀ գործընկեր հինգ համայնքների 14-17 տարեկան պատանիների խմբեր, որոնք լուսանկարեցին իրենց համայնքների խնդիրները և PicsArt հավելվածի միջոցով պատկերեցին դրանց լուծումները: Ծրագրի նպատակը ոչ միայն նոր տեխնոլոգիաներ օգտագործելն ու երեխաների հմտությունները զարգացնելն է, այլև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ուշադրությունը համայնքում առկա խնդիրների վրա սևեռելը:

*«Երբեմն չենք էլ պատկերացնում, որ ամեն մի հնարավորություն նոր սերնդի կյանքում մեծ փոփոխություն է բերում: Հայաստանն այս լուսավոր, սուր մտքով ու վաղվա օրվա հանդեպ հավատով լցված մարդկանց երկիրն է»:*

***Մանկական զարգացման հիմնադրամի տնօրեն Լուսինե Սիմոնյան***

*«Beeline-ի համար այս ծրագիրն արժեքավոր է մի քանի պատճառով: Որպես հեռահաղորդակցության ոլորտում աշխատող ընկերություն՝ մենք ամեն կերպ խրախուսում ենք երիտասարդության շրջանում թվային տեխնոլոգիաների տարածումը: Բացի այդ, որպես սոցիալապես պատասխանատու ընկերություն՝ մենք ուրախ ենք, որ նոր սերունդն աշխատում է մեր երկրում կյանքն ավելի լավը դարձնելու համար»:*

***Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախին***

Ծրագրի մասնակիցներն այցելեցին PicsArt-ի գրասենյակը, «Այբ» դպրոցը, ինչպես նաև «Թեքնոլոջի ընդ Սայնս Դայնամիքս» (Թի-Էս-Դի) ընկերության բարձր տեխնոլոգիաների արտադրամաս, որտեղ ստեղծվել են հայկական առաջին հեռախոսներն ու դյուրակիր համակարգիչները՝ ArmPhone-ը և ArmTab-ը:

Ծրագիրն ամփոփվեց մասնակիցների լուսանկարների ցուցահանդես-մրցույթով: Մրցույթի 5 հաղթողները պարգևատրվեցին պլանշետային համակարգիչներով, ևս 5 հեղինակ նվեր ստացան EcoPad բազմակի օգտագործման նոթատետրեր:

# Համագործակցություն Դասական երաժշտության զարգացման հիմնադրամի հետ

«Դասական երաժշտության զարգացման» հիմնադրամը ստեղծվել է Ա. Խաչատրյանի անվան եռյակի երաժիշտների կողմից 2010 թ-ին, և արդեն ութ տարի իրականացնում է կրթական և բարեգործական ծրագրեր դասական երաժշտության ոլորտում: Beeline-ը հանդիսանում է Հիմնադրամի մշտական գործընկերը 2011 թ–ից ի վեր:

2016 թ-ի սեպտեմբերից մինչև 2017 թ-ի օգոստոս Beeline-ի աջակցությամբ «Խաչատրյան տրիո» խմբի մասնակիցները անցկացրեցին 30-ից ավել համերգ և վարպետության դաս:

2017 թ-ին Տրիոյի մասնակիցները այլազգի երաժիշտների հետ միասին իրենց փորձով կիսվեցին 100-ից ավելի աշակերտների հետ՝ Երևանում, Վանաձորում, Չարենցավանում, Էջմիածնում և Ստեփանակերտում կազմակերպված բազմաթիվ հանդիպումների ընթացքում: Այս քաղաքներում խմբի համերգներն այցելեց շուրջ 5000 հանդիսատես:

*«Beeline-ի աջակցության շնորհիվ մեզ հաջողվում է շարունակել և իրագործել նախատեսված բոլոր ծրագրերը, ինչը հնարավորություն է տալիս ապագային նայել լավատեսորեն»:*

***«Խաչատրյան տրիոյի» ջութակահար Կարեն Շահգալդյան***

# «Հուսո առագաստ» հեղինակային երգի միջազգային փառատոն

Օգոստոսին Beeline-ի աջակցությամբ Սևանի ափին կայացավ «Սիվիլ Արտ» մշակութային հասարակական կազմակերպության «Հուսո առագաստ-2017» հեղինակային երգի միջազգային երրորդ փառատոնը: Այս տարի փառատոնի շրջանակում տեղի ունեցան տասնյակից ավելի երգերի պրեմիերաներ:

Երիտասարդ երգահաններից բացի՝ նոր ստեղծագործություններ ներկայացրին հայտնի բարդեր Ռուբեն Հախվերդյանն ու Արմեն Ադամյանը: Առաջին անգամ հայ հեղինակներից բացի կապուտակ Սևանի ափին հանդես եկան բարդեր Ռուսաստանից, Ուկրաինայից և Վրաստանից, ինչը թույլ տվեց հայ հանդիսատեսին և երգահաններին ևս մեկ անգամ վայելել արտասահմանյան հեղինակային երգը:

Փառատոնի եզրափակիչ փուլի համերգին ներկա էր 150-ից ավելի հանդիսատես, այդ թվում և Գյումրու ու Վանաձորի մանկատների սաներ:

*«Այս տարի ոչ միայն փառատոնի աշխարհագրական շրջանակն էր ընդգրկուն, այլև մասնակցել ցանկացողների: Շնորհակալ եմ բոլոր աջակիցներին, գործընկերներին, առանձնապես՝ Հայաստանում Beeline-ին՝ փառատոնի գլխավոր հովանավորին, մեզ մշտապես սատարելու և մեր կողքին լինելու համար»:*

***«Սիվիլ Արտ» մշակութային հասարակական կազմակերպության տնօրեն Վախթանգ Հարությունյան***

# 3G
# «3-րդ սերունդ»

Սեպտեմբերին Beeline-ում ամփոփվեցին «3-րդ սերունդ» ստաժավորման 9-րդ ծրագրի արդյունքները: Ծրագրի շրջանակում 17 ուսանողներ 11 ամիս վճարովի փորձաշրջան անցան ընկերության Տեղեկատվական տեխնոլոգիաների, Մարքեթինգի, Իրավաբանական և այլ բաժիններում, իսկ լավագույն ուսանողները մշտական աշխատանքի առաջարկ ստացան Beeline-ում:

«3-րդ սերունդ» ստաժավորման ծրագրի՝ 9 տարվա ընթացքում պրակտիկա անցած ուսանողների 50%-ից ավելին դարձել են Beeline–ի աշխատակից:

*«Ինձ միշտ շատ ուրախացնում է, երբ մեզ մոտ երիտասարդներ են գալիս: Հաճելի է տեսնել, որ նրանց հետաքրքիր է աշխատել մեր ընկերությունում»:*

***Հայաստանում Beeline-ի Գլխավոր Տնօրեն Անդրեյ Պյատախին***

# Beeline-ի մասնակցությամբ անցկացվեց Աշխատանքի անվտանգության շաբաթը

Նոյեմբերին Հայաստանում Beeline-ը և Հայաստանի գործատուների հանրապետական միությունը Հայաստանում առաջին անգամ անցկացրեցին «Անվտանգ աշխատատեղը մեր նպատակն է» խորագրով շաբաթը: Յոթ օրվա ընթացքում հայաստանյան քոլեջների ուսանողներն ու շրջանավարտները ծանոթացան աշխատանքի անվտանգության ոլորտում այնպիսի խոշոր հաստատությունների փորձի հետ, ինչպիսիք են Հայաստանում Beeline-ը և «Կոկա-Կոլա Հելլենիկ Արմենիա»-ն: Երիտասարդների համար կազմակերպվեցին աշխատանքի անվտանգության մասնագետների դասընթացներ, մրցույթներ և այցելություններ ընկերությունների գրասենյակները:

*«Մենք շատ ուշադիր ենք մեր աշխատակիցների անվտանգության նկատմամբ և այժմ ուրախ ենք կիսվել այդ փորձով հայ երիտասարդների հետ, որպեսզի հնարավորինս ապահովագրենք նրանց կյանքն ու առողջությունը»:*

***Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախին***

# Beeline-ն առաջին անգամ մասնակցեց «Սևան Ստարտափ Սամմիթ 2017»-ին

Հուլիսին 1000 հայկական ստարտափերին ներկայացուցիչներ մասնակցեցին «Ստարտափ Արմենիա» հիմնադրամի երկրորդ ամենամյա «Սևան Ստարտափ Սամմիթ 2017» ֆորումին: Ճամբարային պայմաններում անցկացվող այս համաժողովը թույլ տվեց հայկական ստարտափներին անմիջական մթնոլորտում փորձի փոխանակում իրականացնել, ինչպես նաև CampFire Pitch-երի ընթացքում շփվել հնարավոր ներդրողների հետ: Beeline-ը հանդես եկավ որպես «Սևան Ստարտափ Սամմիթ 2017»-ի գլխավոր աջակից և ապահովեց միջոցառման ինտերնետ հասանելիությունը:

«Սևան Ստարտափ Սամմիթ 2017»-ի մասնակիցներն էին ստարտափերին և ծրագրավորողների 100 թիմեր, շուրջ 20 ներդրողներ, վենչուրային կազմակերպություններ և մենթորներ: Ֆորումին ակտիվ մասնակցեցին նաև Beeline-ի աշխատակիցները, իսկ Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախինը միացավ մի շարք միջոցառումների՝ մրցույթների և վարպետության դասերի, անմիջական շփման ընթացքում ծանոթացավ համաժողովի մասնակիցների հետ:

*«Ես շատ ուրախ եմ լինել այստեղ և տեսնել այսքան հայկական ստարտափերին ներկայացուցիչների մեկ վայրում: Beeline-ը, հավատարիմ լինելով իր առաքելությանը, պատրաստ է հնարավորինս աջակցություն ցուցաբերել ստարտափերին կայացմանը և SS ոլորտի զարգացմանը, քանի որ դա կարող է շատերի կյանքը փոխել դեպի լավը»:*

***Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախին***

*«Մենք շատ ուրախ ենք, որ Beeline-ը միացավ սամմիթին: Դա միայն խոսում է այն մասին, որ ընկերությունը ցանկություն ունի աջակցել հայկական ստարտափերին զարգացմանը»:*

***«Ստարտափ Արմենիա» հիմնադրամի տնօրեն Տիգրան Պետրոսյան***

# Նոր՝ ընդլայնված համագործակցություն Երևանի Պետական Համալսարանի հետ

Մարտի 29-ին Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախինը և Երևանի Պետական Համալսարանի ռեկտոր Արամ Սիմոնյանն ստորագրեցին համագործակցության հուշագիր: Այսպիսով, սկսվեց Beeline-ի մասնակցությունը Համալսարանի «Լիդերության դերը կարիերայի զարգացման գործում. բուհ - ձեռնարկություն համագործակցության նոր ձևաչափ» ծրագրին, որը հնարավորություն է տալիս ուսանողներին ձեռք բերել կարիերայի կառուցմանը վերաբերող պրակտիկ հմտություններ, երիտասարդ մասնագետներին ներկայացնել գործատուներին և խթանել սոցիալական ակտիվությունն ու լիդերությունը:

Պաշտոնական արարողության ավարտից հետո Անդրեյ Պյատախինն ուսանողների համար վարեց վարպետաց դաս «Հեռահաղորդակցության ոլորտի զարգացումը» թեմայով:

Աշխատելով ամենաարագ զարգացող ոլորտում՝ Beeline-ը միշտ պատրաստ է համալրել իր աշխատակիցների շարքերը տաղանդավոր և նպատակասլաց երիտասարդներով: Ծրագրի արդյունքում որոշ համալսարանականներ հնարավորություն ստացան մասնակցել մրցույթ-ընտրությանը և հետագայում աշխատել Beeline-ում:

*«Beeline-ի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրերում երիտասարդներն առանցքային տեղ են զբաղեցնում: Նման ծրագրերի իրականացման շնորհիվ մենք աջակցում ենք կրթական ոլորտի զարգացմանը և փորձում օգնել երիտասարդներին փոխել իրենց կյանքը դեպի լավը»:*

***Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախին***

# Առաջին անգամ տպագրվեց Օպերայի և բալետի թատրոնի պատմության մասին աշխատություն




Beeline-ի աջակցությամբ տպագրված ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Սերգեյ Առաքելյանի գրքում հանգամանորեն ներկայացված է Օպերայի և բալետի թատրոնի հիմնադրման նախապատմությունը, համակարգված է 150 տարվա մանրամասն ժամանակագրությունը: Առաջին անգամ ներկայացված են թատրոնում աշխատած ռեժիսորների ու տնօրենների, դիրիժորների ու երաժիշտների, երգիչների ու բալետի արտիստների կենսագրությունները, նշված են հոբելյանական և հյուրախաղային բոլոր ներկայացումները:

Հեղինակն օգտագործել է բազմաբնույթ նյութեր իր անձնական, թատրոնի և տարբեր թանգարանների պահոցներից, ինչպես նաև առանձին արվեստագետների անձնական արխիվներից:

*«Անչափ ուրախ ենք, որ Beeline-ի հետ ձևավորված համագործակցության արդյունքում արդեն մեր ձեռքին է Հայաստանի օպերայի և բալետի թատրոնի պատմությունն ամբողջացնող հատորյակը»:*

***Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի տնօրեն և գեղարվեստական ղեկավար Կոնստանտին Օրբելյան***



*«Ինչպես գիտեք, Beeline-ը միշտ բարձր է գնահատել պատմությունը գալիք սերունդներին փոխանցելու մեր առաքելությունը: Իսկ Օպերայի և բալետի թատրոնի կայացումը Հայաստանի մշակութային պատմության կարևորագույն մասն է: Այս գիրքը միաժամանակ նշանավոր արվեստագետներին հարգանքի տուրք է և երիտասարդների համար ոգեշնչման ու գիտելիքների աղբյուր»:*

***Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախին***

# Թվայնացվեց «Արմենպրես»-ի ֆոտոարխիվի 10 000 լուսանկարը

«Արմենպրես» լրատվական գործակալության, Հայաստանում Beeline-ի և Տեխնոլոգիական Զարգացման Կենտրոն Հիմնադրամի համատեղ ջանքերով՝ «Արմենպրես. Պատմություն» նախագծի շրջանակում թվայնացվեց «Արմենպրես» լրատվական գործակալության ֆոտոարխիվը՝ թվով 10 հազար լուսանկար, որոնք այժմ հասանելի են history.armenpress.am կայքում:

«Արմենպրեսը» հիմնադրվել է 1918 թ-ին. այն Հայաստանի հնագույն լրատվական գործակալությունն է, որը լուսաբանել է մեր երկրի պատմության վերջին հարյուր տարվա բոլոր կարևորագույն իրադարձությունները:

Թվայնացման և կայքի ստեղծման աշխատանքներն իրականացվել են Տեխնոլոգիական Զարգացման Կենտրոն Հիմնադրամի կողմից: **Նախագծի գլխավոր աջակիցը Beeline-ն է**:

*«Այս ծրագրի ավարտը նշանակում է, որ լայն հանրությունն համար արդեն հասանելի են մեր երկրի պատմության մեկդարյա վկայությունները: Շատ խորհրդանշական է, որ անցյալի պահպանման համար օգտագործվել են ապագայի տեխնոլոգիաները. այսինքն, մեզ հաջողվել է պահպանել կապն անցյալի հետ և միևնույն ժամանակ վստահ քայլել առաջ»:*

***Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախին***

# Փորձի փոխանակում

Ամեն տարի Beeline-ի մասնագետներն ու ղեկավարները կիսվում են իրենց հարուստ փորձով ՀՀ ամենատարբեր ուսումնական հաստատությունների ուսանողների և երիտասարդ մասնագետների հետ: Մասնավորապես, 2017 թ-ի ընթացքում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախինն անցկացրեց մի քանի դասախոսություն՝ ոլորտի և աշխատաշուկայի կարևորագույն ու հրատապ հարցերի շուրջ:

## Դասախոսություն ԵՊՀ-ում:

**Ունկնդիրներ՝** Երևանի պետական համալսարանի Սոցիոլոգիայի ֆակուլտետի հեռաուսուցման լաբորատորիայի՝ մարքեթինգի և հասարակայնության հետ կապերի ոլորտում վերապատրաստման մեկամյա դասընթացի մասնակիցներ:

**Թեման՝** *«Ռազմավարական որոշումների կայացում»*:

Անդրեյ Պյատախինը ներկայացրեց ճիշտ ռազմավարական որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ քայլերը.

- ինչպես ուսումնասիրել իրավիճակը,
- ինչ հանգամանքներ հաշվի առնել,
- ինչպես խուսափել առավել հաճախ հանդիպող սխալներից:

## Դասախոսություն «Առաջնորդության դպրոցում»

**Ունկնդիրներ՝** «Առաջնորդության դպրոց» բաց դասի մասնակիցներ:

**Թեման՝** *«Բիզնեսը թվային ապագայում»:*

Ընկերության ղեկավարն իր սեփական փորձի և Սիլիկոնային հովիտ կատարած այցի հիման վրա լսարանին ներկայացրեց բիզնեսի կառավարման հիմնական միտումներն ու գործիքները, որոնք կիրառում են «պիոներ կազմակերպություններն» ու թվային ապագայի «ճարտարապետ» ընկերությունները:

## Դասախոսություն «Մերգելյան» ակումբում

**Ունկնդիրներ՝** «Մերգելյան» ակումբի անդամներ:

**Թեման՝** *«Թվային տեխնոլոգիաներ և ապագայի բիզնես»:*

Ընկերության ղեկավարը պատմել է՝ ինչպես պետք է բիզնեսները հարմարվեն ժամանակակից աշխարհին և ինչպիսի փոփոխությունների պիտի ենթարկվեն՝ զարգանալու համար:

## Դասախոսություն «Շիրակացու ճեմարանում»

**Ունկնդիրներ՝** «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրի ավագ դպրոցի սաներ:

**Թեման՝** *«Աշխատաշուկայի պահանջներն ու ժամանակակից տեխնոլոգիաները»:*

Հանդիպման ընթացքում Beeline-ի ղեկավարը ներկայացրեց ոչ միայն ժամանակակից աշխատաշուկայի պահանջները, այլև այդ պահանջներին համապատասխանելու գործիքները:

# Բարձր գնահատական

***Beeline-ը հովանավորում է Հայկական PR մրցանակաբաշխությունը: Հատուկ մրցանակ՝ գրագետ հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառման համար:***

Հուլիսին Beeline-ի աջակցությամբ «Հայկական Փի Ար ասոցիացիա» հասարակական կազմակերպությունն անցկացրեց Հայկական երկրորդ PR մրցանակաբաշխությունը:

Մրցանակաբաշխության նպատակն է զարգացնել և տարածել Հայաստանում ***գրագետ հաղորդակցության մշակույթը*** հանրային կապերի (PR) մասնագետների, ՁԼՄ-ների և հասարակության տարբեր շերտերի միջև, նպաստել PR մասնագետների ակտիվ դերակատարությանը քաղաքական-հասարակական գործընթացներում, հանրային կյանքում:

Մրցանակաբաշխությունը հիմնադրվել է 2016 թ-ին և ոչ միայն օգնում է նոր չափանիշներ սահմանել հանրային կապերի պատասխանատուների համար և խթանում առողջ մրցակցությանը մասնագիտական դաշտում, այլև խրախուսում է լինել առավել ստեղծագործ և առաջադեմ՝ ըստ արժանվույն գնահատելով հանրային կապերի լավագույն մասնագետներին և ոլորտի զարգացմանը նպաստող անհատներին:

Այս տարի արդեն հաստատված՝ ավանդական անվանակարգերին ավելացել էին ևս երկուսը՝ Նորարարական PR և PR տեխնոլոգիա, որոնք լավագույնս արտացոլում են ժամանակակից՝ արագ փոփոխվող աշխարհի չափանիշները և միտված են նպաստելու PR ոլորտում պրոֆեսիոնալիզմի խթանմանը: ***Մրցանակաբաշխության մասնագիտական հանձնաժողովի կազմում էր ընդգրկվել Beeline-ի հանրային կապերի ղեկավար Նաիրա Նազարյանը:***

***Հայկական PR մրցանակաբաշխության հիմնադիրներից մեկն ու գլխավոր հովանավորն է Հայաստանում Beeline-ը:***

***Հանրային կապերի արժևորման և գրագետ հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառման համար Հայաստանում Beeline-ի գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախինը արժանացավ Հայկական PR մրցանակաբշխության հատուկ մրցանակի:***

## *Արգենտինայում տրված մրցանակը:*

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսյանը հանդիպեց «ՎԵՈՆ» ընկերությունների խմբի Եվրասիա միավորի գլխավոր գործադիր տնօրեն Միխայիլ Գերչուկին և Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախինին և հանձնեց նրանց ***«Արևելյան Եվրոպա տարածաշրջանի առաջատար ընկերություն» մրցանակը***, որը կազմակերպությանը տրվել էր Բուենոս Այրեսում՝ Հեռահաղորդակցման զարգացման համաշխարհային համաժողովի շրջանակում կայացած տարածաշրջանային առաջատար ընկերությունների մրցանակաբաշխության ժամանակ:

## *«Ոսկե Մրցանակ»՝ «ԵՎՐԱԶԵՍ» երկրների միջպետական մրցույթում:*

***Միջազգային ստանդարտների ներդրման բնագավառում ծավալած աշխատաքների համար Beeline-ը պարգևատրվեց «Ոսկե Մրցանակ»-ով***: Արդյունքների ամփոփումն

ու մրցանակների հանձնման պաշտոնական արարողությունը տեղի ունեցավ «ԴԱԲԼԹՐԻ ԲԱՅ ՀԻԼԹՆ ԵՐԵՎԱՆ ՍԻԹԻ ՍԵՆԹՐ» հյուրանոցում՝ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի և «Համազգային վստահություն» խորհրդի կողմից կազմակերպված մրցույթի շրջանակում:

## Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախինն արժանացավ ՀՀ վարչապետի շնորհակալագրին:

Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ Գագիկ Մակարյանը Անդրեյ Պյատախինին հանձնեց ՀՀ վարչապետի շնորհակալագիրը՝ ***կայուն զբաղվածություն ապահովելու, արժանապատիվ աշխատանքի և կորպորատիվ բարձր պատասխանատվության համար***: Առանձնապես նշվեց Beeline-ի Make your mark ռազմավարությունը, որի շրջանակում Հայաստանում հաջողությամբ իրականացվել է երկու տասնյակից ավելի ծրագիր՝ ուղղված աշխատաշուկայում երիտասարդների զբաղվածության խթանմանը, նրանց մրցունակության բարձրացմանը, ինչպես նաև դպրոցականների շրջանում ձեռնարկատիրական մտածելակերպի զարգացմանը:

## Beeline-ը պարգևատրվեց «Օրինապահ հարկ վճարողի» հավաստագրով:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն պարգևատրեց Beeline-ին «Օրինապահ հարկ վճարողի» հավաստագրով: Հավաստագիրը վկայում է այն մասին, որ ընկերությունը լիովին կատարել է ՀՀ պետական բյուջեի հանդեպ իր բոլոր պարտավորությունները:

## Beeline-ն արժանացել է «Լավագույն գին առաջարկող կապի օպերատոր» մրցանակի:

Հինգերորդ «Տարվա հանրային ծառայող և տարվա ապրանքանիշ 2017» ազգային մրցանակաբաշխության շրջանակում Beeline-ը Հայաստանում արժանացել է «Լավագույն գին առաջարկող կապի օպերատոր» մրցանակին:

*«Յուրաքանչյուր ընկերություն պետք է կարևորի հասարակության հետ շփումը, կրի սոցիալական կորպորատիվ պատասխանատվություն և իրազեկի առաջարկվող ծառայությունների և իրականացվող նախագծերի մասին»:*

***Հայաստանում Beeline-ի Գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախին***

# Մեր արժեքները

- Մենք ստեղծում ենք առաջարկ մեր այսօրվա և վաղվա՛ հաճախորդի համար:
- Մենք մեծագույն ուշադրություն ենք ցուցաբերում նորարարական ծրագրերին և մեր աշխատակիցների շրջանում խրախուսում ակտիվություն ու ստեղծագործ մտածողություն:
- Մենք շատ ուշադիր ենք մեր աշխատակիցների անվտանգության նկատմամբ և ուրախ ենք կիսվել այդ փորձով երիտասարդների հետ, որպեսզի հնարավորինս ապահովագրենք նրանց կյանքն ու առողջությունը:
- Հավատարիմ լինելով մեր առաքելությանը՝ մենք պատրաստ ենք աջակցություն ցուցաբերել ստարտափերի կայացմանը և SS ոլորտի զարգացմանը, քանի որ դա կարող է շատերի կյանքը փոխել դեպի լավը:
- Մեր ծրագրերում երիտասարդներն առանցքային տեղ են զբաղեցնում:
- Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտն այսօր աշխարհում առավել ակտիվ զարգացողներից մեկն է, և մեզ համար շատ կարևոր է քայլել ժամանակին համընթաց, ետ չմնալ նոր միտումներից ու լուծումներից: Դա կարևոր է ոչ միայն մեր մասնագիտական առաջընթացի, այլև երկրի ընդհանուր զարգացման համար:
- Մեզ համար հատկապես կարևոր է  այն ծրագրերի իրագործումը, որոնք թվային տեխնոլոգիական լուծումների միջոցով նպաստում են ապագայի կերտմանը:
- Մենք համոզված ենք, որ կրթվելու և զարգանալու պայմանները պետք է հավասար լինեն յուրաքանչյուր երեխայի համար, քանի որ երեխան է հանդիսանում համայնքի զարգացման երաշխիքը և պետության վաղվա քաղաքացին:
- Մենք հասկանում ենք, որ աշխատանքի կազմակերպման հին մոդելները էլ չեն աշխատում և պետք է մշտապես կատարելագործվել:
- Մենք սիրում ենք, երբ մեզ մոտ երիտասարդներ են գալիս:

Beeline 2017